ԱՐՑԱԽ—ՀԱՅԱՍՏԱՆ. համատեղ գործողությունների ժամանակը

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի համատեղ որոշմանը արցախցիների ցույց տված միահամուռ ջերմ պաշտպանության փայլուն հավաստիքը եղավ Ստեփանակերտի Հաղբանակի հրապարակում անցած կիրակի օրը կայացած մարզային կենտրոնի բնակիչների բազմահազարանոց միտինգը:

Ներկաներին դիմեց ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նախագահ, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Վաչագան Գրիգորյանը: Նա միտինգի մասնակիցներին և ի դեմս նրանց՝ Արցախի բոլոր աշխատավորներին շնորհավորեց մեր ժողովրդի համար պատմական իրադարձության առթիվ: Հոետորն ընթերցեց ընդունված որոշումների տեքստերը և մարդկանց կոչ արեց առավելագույն ջանքեր գործադրել հայոց պառլամենտի որոշումների կենսագործման համար: Ընդ որում նա ընդգծեց, որ անհրաժեշտ է համախմբվել Ազգային խորհրդի՝ որպես իրավավար մարմնում ներկայումս գործող միակ օրինական իշխանության շուրջը, ամրապնդել կարգապահությունը, չզբաղվել իրավագործունեությամբ, չենթարկվել ամեն կարգի պրովոկացիաներին:

Միտինգում ելույթ ունեցողները նշում էին, որ հայ ժողովուրդը պետք է իրը վճռի իր բախտը, և նա այդ բանն արեց: Հիմա կոնկրետ գործեր են պետք: Համատեղ որոշումները պահանջում են համատեղ գործողություններ: Պետք է հիշել, որ արդարության վերջնական հաստատման համար պայքարը դեռ չի ավարտված, քանի որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրադրության նորմալացման միջոցառումների մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը բացարձակապես չի համապատասխանում Արցախի իրողություններին և էլ ավելի է բարդացնում ազգամիջյան հարաբերությունները ռեգիոնում:

Միտինգում ընթերցվեց մի խումբ զինակոչիկների դիմումը՝ հասցեագրված ԼՂԻՄ-ի զինվորական կոմիսար, գնդապետ Վ. Վինոգրադովին: Դիմումով խնդրվում է օժանդակություն ցույց տալ, որ զինակոչիկները մարզի բարդ իրադրության կապակցությամբ իրենց զինվորական ծառայությունը անցկացնեն Լեռնային Ղարաբաղի տարածքում:

Նույն օրը երեկոյան տեղի ունեցավ ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նախագահության նիստ, որտեղ քննարկվեց ընթացիկ պահի հարցը:

Ստեփանակերտի օդանավակայանում տեղի ունեցած պատահարի առթիվ ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության պետի պաշտոնակատար, գնդապետ Ա. Ուսենկոն Արմենպրեսի թղթակցին հետևյալը հաղորդեց.

— Դեկտեմբերի 3-ին, գիշերվա մոտավորապես ժամը 3-ին քաղաքի օդանավակայանի թռիչքավայրէջքային գոտում անհայտ անձինք պայթուցիկ համասարք են գործադրել: Պայթյունի հետևանքով գոյացել է 1,5 մետր տրամագծով և 25 սանտիմետր խորությամբ ձագար: Պատահարի վայրն են մեկնել ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության օպերատիվ-քննչական խումբը և ԽՍՀՄ ներքին գործերի ministության քրեական հետախուզության գլխավոր վարչության օպերատիվ աշխատողները: Տուժածներ չկան: Նորոգման աշխատանքների կապակցությամբ օդային տրանսպորտի երթևեկությունը ժամանակավորապես դադարեցվել էր: Թռիչքները վերսկսվեցին նույն օրը, ժամը 16-ին: Այդ փաստի առթիվ քննություն է կատարվում: